ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հունիսի 2014թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

Երևան համայնքի սեփականություն համարվող Էրեբունու փողոցի 15 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 68.4քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 5 /հինգ/ տարի ժամկետով տրամադրել «Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն»» հասարակական կազմակերպությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Էրեբունու փողոցի հ.15 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքում 68.4քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու խնդրանքով:

Էրեբունու փողոցի հ.15 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքը համարվում է Երևան համայնքի սեփականությունը:

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ և աջակցությամբ: Կազմակերպության կողմից իրականացվել է բազմաթիվ ծրագրեր ուղղված հաշմանդամների սոցիալական և մշակույթային ինտեգրմանը, կրթական մակարդակի բարձրացմանը, զբաղվածության խթանմանը և միջավայրի մատչելիության ապահովմանը: Կազմակերպությունն իրականացրել է բազմաթիվ իրազեկման միջոցառումներ և ակցիաներ, այդ թվում համաժողովներ, սեմինարներ, հաշմանդամ կանանց գեղեցկության մրցույթներ, «Փարոս» կամերային երգչախմբի համերգներ, ինչպես նաև կազմակերպության անմիջական աջակցությամբ հարյուրավոր հաշմանդամներ տեղավորվել են մշտական աշխատանքի:

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը մշակել է մի նոր ծրագիր, որի շրջանակներում հիմնադրվելու է հաշմանդամների մշակույթային ուսումնա-արտադրական կենտրոնը, որտեղ վերապատրաստվող թվով տաս հաշմանդամները դասընթացներն ավարտելուց հետո դառնալու են կենտրոնի մշտական աշխատակիցներ: Կենտրոնը զբաղվելու է նաև մշակույթային ֆիլմերի արտադրությամբ, հաշմանդամների (այդ թվում նաև երեխաների) մասին և այլ սոցիալական թեմաներով տեսանյութերի պատրաստմամբ:

Հիմք ընդունելով «Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն»» հասարակական կազմակերպության դիմումը, հաշվի առնելով կազմակերպության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում որոշման նախագիծ՝ Էրեբունու փողոցի հ.15 հասցեում գտնվող մշակույթի կենտրոնի շենքի 1-ին հարկի 68.4քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 5 /հինգ/ տարի ժամկետով Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Էրեբունու փողոցի թիվ 15 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելուու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵԲՈՒՆՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Էրեբունու փողոցի թիվ 15 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ